

ՌՈՒՍԹԱՎԵԼԻՆ ԵՎ ՆՐԱ «ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ»

ՀՍՍՀ ԳԱ քղրակից-անդամ ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ

«Զէ՛, չի լռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին,
Ու դարավոր ցավն ամենի
Զի խորտակել էն հոգին»:

Հայ ժողովրդի սրտի և հոգու թարգման Հովհաննես Թումանյանը իր այս սրտարուիս և խորիմաստ քառատողով ո՛չ միայն արձանագրել է մեր բաղմադարյան հարևան և հավերժական եղբայրակից վրաց ժողովրդի հանճարեղ բանաստեղծի անմահությունը, այլև բնութագրել է նրա անմահ ստեղծագործության անխորտակելի կենսահաստատ դերը, պատմական բախտորոշ նշանակությունը իր ժողովրդի ազգային ինքնությունությունը և նրա հոգևոր գանձառանը պահպանելու գործում:

Դժվար թե հնարավոր լինի մատնանշել մի այլ գրական ստեղծագործություն, որ այս կամ այն ժողովրդի պատմական ճակատագրի մեջ ունեցած լինի այնքան վճռական նշանակություն, որքան «Վագրենավորը»:

Ռուսթավելին իր դյուցազնավեպը գրել է XII—XIII դարերի հանդիպակետում՝ Թամար թագուհու ժամանակաշրջանում, երբ տերիտորիայես ընդլայնված, պետականորեն միավորված ավատական Վրաստանում բուռն վերելք էին ապրում արվեստը, գիտությունն ու աշխարհիկ գրականությունը: Ռուսթավելին հանդես եկավ որպես իր հայրենիքի գրականության ոսկեդարի ամենապայծառ աստղը իր ավագ ժամանակակիցներ՝ մեծ բանաստեղծներ Խոնելու, Շավթելու և Թմոզվելու համաստեղության մեջ:

«Վագրենավորը» գրելուց հազիվ մի տասնամյակ անց Վրաստանի վրա պայթեց մի աղետավոր փոթորիկ՝ մոնղոլական հորդանների արշավանքը, որը խորտակեց երկրի պետական-տնտեսական հիմքերը, կասեցրեց գրականության զարգացումը և մոտ հինգ դար լռեցրեց բանաստեղծության ձայնը: Ռուսթավելին կարծես կանխազգացել էր այդ վերահաս աղետը, ուստի իր ժողովրդին ավանդեց «Վագրենավորը» դյուցազնեղությունը, որպես գալիք սերունդների անսպառելի հոգևոր սնունդ:

Ժողովուրդն այդ ավանդն ընդունեց ու պահպանեց որպես սրբություն, որպես հայրենասիրության, հերոսականության, բարձր մարդկայնության, ազնիվ սիրո, եղբայրության ու բարեկամության ներշնչման աղբյուր, որպես հոգու տոկունության անխորտակ պատվար:

Ահա այդ դիտակցությամբ է գրել Թումանյանը՝ «Ու դարավոր ցավն ամենի չի՛ խորտակել էն հոգին»: Միայն բարեկամ ժողովրդի մեծ բանաստեղծը կարող էր այսքան ճիշտ և այսքան բարձր գնահատական տալ վրաց ժողովրդի հոգու հանճարին, նրա պատմական դերին:

* * *

Ռուսթավելին օրինական հաջորդն էր իր տաղանդավոր նախորդների ու ժամանակակիցների, բայց իր հանձարի մեծությամբ ու պատմական ղերով շատ ավելի բարձր կանգնեց նրանցից։ Նա ընդդրկեց և վարպետորեն համադրեց Արևելքի ու Արևմուտքի արվեստն ու փիլիսոփայությունը։ Ռուսթավելին սնվել էր ոչ միայն Վրաստանի ջերմ արևով ու կարկաշուն աղբյուրներով, այլև Իրանի վարդաստանի բույրով, Արաբիայի լայնատարած հորիզոնի ծիածանի գույներով, Հոմերոսի վիպական շնչով, Հունաստանի դասական փիլիսոփայության գաղափարներով, իմաստության ծառի պտուղներով։

Աինելով վրաց պատմության որոշակի դարաշրջանի ծնունդ և իր հարազատ վրաց ժողովրդի հոգու թարգման՝ Ռուսթավելին սակայն գերաձեց և դուրս եկավ վրաց պատմության և մշակույթի սահմաններից, մտավ համամարդկային, համաշխարհային մշակույթի սահմանները, հաստատուն կանգնեց Հոմերոսի, Վիրգիլիոսի, Ֆիրգուսու, Դանթեի և այլ հանձարների կողքին։

Արևելքը տվեց Ռուսթավելուն նրա դուցազներգության պատմողական բովանդակությունը, ինչպես խոստովանում է ինքը բանաստեղծը, և Արաբիայում, Հնդկաստանում ու Ասորիքում է ծավալվում «Վազրենավորի» հերոսների գործունեությունը՝ հասնելով, մի կողմից, մինչև Չինաստան, մյուս կողմից՝ մինչև Բյուզանդիա։ Եվ թեև դուցազներգության մեջ չեն հիշատակված ո՛չ Վրաստանը և ո՛չ էլ որևէ վրացի հերոս, այնուամենայնիվ նա է՝ և մնում է որպես իր հայրենիքի, իր հարազատ վրաց ժողովրդի հոգևոր ստեղծագործությունը, վրաց ժողովրդի պատմության կոնկրետ ժամանակաշրջանի, նրա հոգեվոր հարստության, նրա գաղափարաբանության, նրա երազանքների ու հոգեբանության արգասիքն ու արտահայտությունը։

Արևաշող Վրաստանի բոցաշունչ հանձարը կարողացավ ժողովրդական ֆանտազիայի մոտիվները և իրական Վրաստանի գաղափարական հարստությունը իր զրչի կախարդական զորությամբ վերածել մի անձեռագործ կերտվածքի, որն իր բազմերանգ փայլով, կենսահաստատ ուժով, մանրամասների նուրբ ասեղնագործմամբ և ձուլածո ամբողջականությամբ նմանը չունի համաշխարհային բանարվեստի մեջ։

Ռուսթավելագիտության մեջ առաջ են քաշվել և տարածում գտել ամենաբազմազան կարծիքներ «Վազրենավորի» ժանրային առանձնահատկության, զրական բնույթի մասին, ոմանք այն համարել են սիրային վիպերգ՝ համաշխարհային ճանաչման արժանացած «Տրիստան և Իզոլդայի», «Ռոմեո և Ջուլիետայի», «Աելլի Մեջլումի» նման, ոմանք դասել են միջնադարյան ասպետական վեպերի շարքը, ոմանք էլ, և սա ամենատարածված տեսակետն է, ընդունում են, որ «Վազրենավորը» վրացական ժողովրդական էպոսն է։ Անշուշտ ճշմարտություն կա այս բոլոր կարծիքների մեջ. «Վազրենավորը» և՛ սիրավեպ է, և՛ ասպետավեպ, և՛ դուցազնավեպ, բայց ըստ էության չի կարող նույնացվել զրանցից և ոչ մեկի հետ իր ամբողջությամբ, ժանրային իր ինքնատիպությամբ։

Սիրո տվյալտանքներն ու ոգորումները, ասպետական մեծահոգությունն ու սխրանքները և վրաց ժողովրդի հոգեկան-գաղափարական-բարոյական աշ-

խարհը այստեղ այնպես են միահյուսված և փոխադարձաբար պայմանավորված, այնպես են բարձրացված և ընդհանրացված, որ դժվար է որոշել, թե որի կողմն է առավելությունը՝ Ռուսթավելու մեծությունը հենց այն է, որ նա և՛ սիրո պրոբլեմը, և՛ սխրագործության նպատակը, և՛ հայրենասիրության զգացմունքը հասցրել է համամարդկային գաղափարական բարձրության։

Ռուսթավելագիտության շնորհակալ ու պատվավոր խնդիրներից մեկն էլ հենց այն է, որ պարզաբանի սիրո, հերոսականության և հայրենասիրության թեմաների աղերսը և սիրավեպի, ասպետավեպի ու ժողովրդական դյուցազնավեպի ժանրային առանձնահատկությունների համադրության վարպետությունը «Վազրենավորի» մեջ։

Արժե սուկայն մի փոքր հանգամանորեն խոսել «Վազրենավորի» սիրային ֆաբուլայի մասին։ Ակներև փաստ է, որ բանաստեղծը որոշակի նպատակով միահյուսել և իրարով պայմանավորել է երկու զույգ սիրող սրտերի երջանկության ուղիները։ Առաջին զույգը Արաբիայի արքայադուստր Թինաթինն ու արքայազուն սպարապետ Ալթանգիլն են, երկրորդ զույգը՝ Հնդկաստանի արքայադուստր Նեստան-Դարեջանն ու արքայազուն սպարապետ Տարիելը, այսպիսին՝ Վազրենավորը։ Եվ այնքան նման են այս երկու զույգերի հասարակական դիրքը, սիրո ուժն ու վեհությունը, մարմնական գեղեցկությունն ու առաքինությունը, ռազմական տաղանդն ու հերոսականությունը, պերճախոսությունն ու հմայքը, որ թվում է, թե նրանք երկվորյակներ են՝ ծնված տարբեր երկրներում կամ նույն անհատականության երկատումն են՝ նետված տարբեր պայմանների մեջ։ Ինչպես էլ մեկնաբանենք այս երևույթը, միևնույն է. երկու դեպքում էլ մենք գործ ունենք հեղինակի հանձարեղ կոմպոզիցիոն մի հնարանի հետ, որ նա կարողացել է գեղարվեստորեն լուծել բոլոր ժամանակներում մարդկության առջև ծառացած աշխարհայացքային ամենաբարդ խնդիրներից մեկը, այն է՝ մարդու և ճակատագրի կամ նախախնամության փոխհարաբերությունը։ Փակագծում նշենք, որ Ռուսթավելին ավելի նախախնամության, քան ճակատագրի գոյություն է ճանաչում։ Ռուսթավելու աշխարհայացքով մարդը բնության մասնիկն է և ենթակա է բնության օրենքին՝ նա ծնվում է և պետք է մեռնի։ Ոչ մի մարդ չի կարող բնության, նախախնամության կամ ճակատագրի այդ անխուսափելիությունը վերացնել, քանի որ մարդու կյանքն ու մահը տնօրինում է նախախնամությունը։ Նախախնամության կամ ճակատագրի ընդունումը, ինչպես հայտնի է, բոլոր դարերում և՛ մարդկային զանգվածներին, և՛ ուժեղ անհատականություններին թեթևափ է արել, զրկել դիմադրավելու, չարիքի և դժբախտության դեմ պայքարելու կամքից։ Այդպես են «Վազրենավորի» հնդիկ հերոսները. Քաջեթի ամբողջում գերության մեջ պահվող Նեստան-Դարեջանը իր սիրած Տարիելին նամակով խնդրում է, որ նա իզուր փորձեր չանի իրեն ազատելու, որովհետև անառիկ է այն ամբողջ և հորդորում է.

Աղոթի՛ր դու հոգուս համար՝ որ թե առնեմ թռչեմ երկինք.

Դու աղոթի՛ր, որ ազատվեմ աշխարհի մեջ տառապելուց.

Որ ազատվեմ հրի, ջրի, հողի, օդի հետ շփվելուց։

Տարիներով իր սիրածին որոնելուց հոգնած և հույսը կտրած Տարիելն էլ, իր հերթին, Ալթանգիլի հուսադրող խոսքերին և որոնումները շարունակելու առաջարկությանը պատասխանում է.

Ինչո՞ւ ես դու կարծում՝ հեշտ է ինձ դիմանալ իմ տանջանքին,
!Մոտ է ժամը իմ բերկրանքի՝ հասել եմ ես մահվան շեմքին:
Սա մեռնելով աղոթում եմ ոչ թե լեզվով, սրտով այրված,
Որ հանդիպենք հանդերձյալում սիրողներս այստեղ դատված...
Իմ ապրելուց, երկրի վրա թափառելուց ո՞վ շահ ունի...
Լուծվել են իմ տարրերն ամեն, հոգիների շարքն եմ հիմի:

Ծակատագրի, դժբախտության հետ հաշտվող, անկատար մնացած սերը ինքնասպանության կամ բնական մահով հանդերձյալ կյանքում իրականացնելու այս հավատով «Վազրենավորի» հնդիկ հերոսները նման են աշխարհի ամենաողբերգական սիրավեպերի հերոսներին, և «Վազրենավորը» երևի շատ քիչ կտարբերվեր նրանցից, եթե Ռուսթավելին սահմանափակվեր միայն դրահով: Ո՛չ, Ռուսթավելին միանգամայն այլ վերաբերմունք ունի նախախնամության հանդեպ և գտնում է, որ շարիքը, դժբախտությունը նախախնամության թելադրանքը չեն, ուստի, մարգը պետք է պայքարի նրանց դեմ և ոչ թե րեկրկի, բռնի թույլ դիմագրության ճանապարհ: Այդ նպատակով էլ «Վազրենավորի» մեջ հանդես են բերված արտք հերոսները՝ Թինաթինն ու Ավթանդիլը, որոնք դիմադրության, կենսահաստատ պայքարի, ակտիվ գործողությունների կրողներն են: Իմանալով Նեստան-Դարեջանի և Տարիելի խափանված սիրո պատմությունը, Թինաթինը իր սիրածին առաջարկում է գնալ, օգնել Տարիելին, խափանել շար ուժերը և երջանկացնել նրան: Իսկ Ավթանդիլը հուսահատված և արդեն իր մեռնելու հետ հաշտված Տարիելին գերմարդկային ճիգերով կյանքի ու պայքարի է կոչում՝ համոզելով, որ չպետք է հավատալ չար բախտին.

Բախտից ինչո՞ւ ես տրտնջում, ի՞նչ բան արավ նա անսովոր.
Ում համար որ մահանում ես, դու չես գտնի կյանքն ատելով.
Ի՞նչ պատահեց անբնական, ինչո՞ւ ես դու հոգիդ մաշում,
Զգիտե՞ս դու, որ առանց փուշ և ոչ մի մարդ վարդ չի քաղում.
Լսի՛ր դու ինձ, գնանք ինձ հետ, հանգիստ, խաղաղ հեծի՛ր քո ձին,
Մի՛ հետևիր դու քո գլխի խորհուրդներին ու մտքերին...

Այսպիսի հորդորանքով և մեծ ջանքերով Ավթանդիլը կարողանում է հուսահատության, անկամության սպանիչ ճիրաններից ազատել իր բարեկամին, և նրանք շարունակում են որոնումներն ու ազատագրում Նեստան-Դարեջանին: Այս կապակցությամբ հետաքրքրական է պարզել «Վազրենավորի» կառուցվածքային մի զրվագ, որը կարծես անհարիր է թե՛ կառուցվածքի ամբողջականությանը և թե՛, մանավանդ, Ռուսթավելու աշխարհայացքին: Եվ, իրոք, դուցազնավեպի բոլոր հերոսները և անցքերը արտացոլում են իրական-մարդկային աշխարհը, գլխավորապես ռամար թագուհու ժամանակաշրջանի իրական Վրաստանի համար բնորոշ մարդկային հարաբերություններն ու նրանց հոգեբանությունը, թեև դիմառնաբար ներկայացված են Վրաստանից դուրս և ոչ վրացական անուններով, սակայն կա մի զրվագ, որը հերիաթային-առասպելական է, ուստի և անհարիր այդ իրականությանը: Դա քաջերի աշխարհն է՝ Քաջեթը, իր անառիկ ամրոցով, որտեղ անդառնալի գերության մեջ իր հուսահատ սրերն էլ անցկացնում Նեստան-Դարեջանը: Այս զրվագը կառուցված-

քային մի արժեքավոր հնարանք է՝ դեղարվեստական շափաղանցում, որի նըպատակն է ցույց տալ, թե ինչու նույնիսկ առյուծ ու վագր պատահող Տարիելը կարող էր ընկրկել, թեև թափ լինել իր շար ճակատագրի, անդիմադրելի տնօրինության հանդեպ, հաշտվել նպատակին չհասած մեռնելու մտքի հետ։ Սակայն Տարիելի կողքին կանգնած է նրա երկրորդ եսը՝ Ալթանդիլը, որը արդեն նոր՝ ռուսթավելյան հայացք ունի տնօրինության ու ճակատագրի հարցում և գտնում է, որ պետք է մինչև վերջին շունչը պայքարել կյանքի, և րջանկության համար, կուլել ամեն տեսակի շար ուժերի դեմ։

Չարիքի դեմ պայքարել, թե ընկրկել, հաշտվել տնօրինության հետ, թե կուլել մինչև վերջ — ահա այս կարևորագույն խնդիրն է առաջ քաշել Ռուսթավելին իր երկի մեջ՝ երկատելով իր հերոսին՝ Ալթանդիլ-Տարիել կամ ստեղծելով երկվորյակ հերոսներ՝ Ալթանդիլ և Տարիել, որոնք իրար հետ բանավիճում են՝ ինչպես մի քանի դար հետո Եվրոպայում ստեղծված Համլետի ներքին երկատումը՝ «Լինել, թե չլինել» թեմային նվիրված հայտնի մենախոսությանը, որ դարեր առաջ Ռուսթավելին ներկայացրեց իր հերոսի երկատմամբ, Ալթանդիլ-Տարիել երկվորյակի վճռական ու բախտորոշ տրամախոսությանը։

Արդեն ավելի քան 250 տարի է, ինչ ուսումնասիրության, ապա նաև գիտական հետազոտության առարկա է դարձել վրաց գրականության արեգնաշող պսակը՝ «Վազրենավորո» պոեմը։ Մի քանի տասնյակ հրատարակություն է ունեցել այդ երկը 1712 թ. մինչև այսօր, տասնյակ բանասերներ ու գրականագետներ են զբաղվել պոեմի ֆաբուլայի, սյուժեի, կառուցվածքի, տիպերի, լեզվի, գաղափարների և այլ պրոբլեմներով, ինչպես և պոեմի անմահ համարյա լեզենդար դարձած հեղինակի անձնավորության պարզաբանման խնդիրներով։

Արձանագրելի է անշուշտ, որ առանձնապես խորհրդային ռուսթավելագիտությունը, և այն էլ վերջին տարիներում, խոշոր հաջողությունների է հասել և ավելի շատ բան է արել, քան արված էր անցյալ երկու հարյուրամյակի ընթացքում՝ սկսած Վախթանգ VI թագավորից, որն առաջին անգամ բանասիրական որոշ խմբագրումով հրատարակեց «Վազրենավորո» 1712 թ.։

Խոշոր դժվարությունների առաջ է կանգնած ռուսթավելագիտությունը՝ ինչ հարցի էլ մոտենալու լինի։ Այդ դժվարություններից առաջինն այն է, որ Ռուսթավելու և մեր միջև ընկած ժամանակը մոռացության է հանձնել այդ հանձարեղ բանաստեղծի կյանքին ու գործունեությանը վերաբերող համարյա բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որի հետևանքով այսօր Ռուսթավելու կենսագրությունը շարադրվում է համարյա բացառապես ժողովրդական բանավոր ավանդությունների տվյալներով, որոնք վերին աստիճանի հակասական են։ Այդ է պատճառը, որ, օրինակ, անկարելի է եղել պարզել, թե ինչ մարդ է եղել Ռուսթավելին իր ծագումով՝ ազնվական, իշխանավոր, թե իր հանձարի ու գործի շնորհիվ պալատական երգչի կոչման արժանացած շինական։

Նրկրորդ հանգամանքը, որ դժվարացնում է Ռուսթավելու և նրա ստեղծագործության հետ կապված մի շարք հարցերի լուծումը, այն է, որ իշխող դասերը՝ և առաջին հերթին հոգևորականությունը, դարերի ընթացքում «ջանասիրաբար» լուծության են մատնել «Վազրենավորո» և նրա հեղինակին, իբրև քրիստոնեական հավատի և միջնադարյան բարոյագիտության դեմ ծառս եղած

ընդվզում, բանադրանքի են ենթարկել այդ պոեմը և մի քանի անգամ այրել ու ոչնչացրել են այն, միաժամանակ տարեգրությունների միջից ջնջելով Ռուսթափելու անուսը:

Միայն ժողովրդին ենք պարտական այն ամենի համար, ինչ մնացել է մեզ Ռուսթափելուց և Ռուսթափելու մասին: Դարերի ընթացքում «Վազրենավորը» եղել է վրաց ժողովրդի ամենասիրելի դիրքը, որպիսին նա պահել է ձեռագրով, պահել էր իր սրտում, իր մտքում և որդոց-որդի ավանդել իբրև օժիտ՝ Բայց ժողովուրդն իր բանավոր ավանդությամբ չէր կարող ամեն ինչ պահել և միայն մասամբ է պահպանել այն կարևոր տեղեկություններն ու նյութերը, որ ոչնչացրել են ժամանակն ու խավարամիտ կղերը:

* * *

«Վազրենավորը» դուցազնավալը սիրային ֆարուայի վրա է կառուցված. սերն այն հիմնական պորբլեմն է, որի շուրջը հյուսել է յուր անգին դիպակը Շոթա Ռուսթափելին:

Ռուսթափելին սիրո նկատմամբ ունի յուր, կարելի է ասել, ռուսթափելապան հայացքները: Ահա դրանք.

Սիրահարը պետք է լինի արևի պես շքնաղ ու վառ,

Սերն է դյութիչ և սքանչելի, խորախորհուրդ է և դժվար,

Զպետք է նույն դասը դասել և ցանկասեր, և սիրահար.

Սար ու ձոր կա երկուսի մեջ, տարածության օվկիան անծայր,

Լավ լսեցեք իմ այս խոսքը և մի խառնեք դրանք իրար...

Սիրահարը շնացող չէ, նա հաստատ է, հավատարիմ,

Ա խ է քաշում յարից բաժան և անդադար հիշում յարին...

Իր այս հայացքները Ռուսթափելին մարմնացրել է ի դեմս պոեմի երկու դույզ սիրահարների՝ Ավթանդիլի ու Թինաթինի և Տարիելի ու Նեստան-Դարեջանի: Իր բարձր գաղափարները պատկերավոր ու շոշափելի դարձնելու համար Ռուսթափելին միահյուսել է երկու դույզերի սիրո ճառագայթները, այդ երկու սերերը փոխադարձաբար պայմանավորել իրարով և իր «արևի պես շքնաղ ու վառ» սիրահարների իղձն իրագործել հերոսական մի շարք սխրագործությունների, անհամար փորձությունների ճանապարհով:

Ինչպիսի՞ մոգական ուժով է կարողացել Ռուսթափելին միահյուսել երկու տարբեր դույզերի սերերը. իբրև հենք յուր «Վազրենավորը» պոեմի:

Արարիայի Ռոստևան թագավորի միակ դուստրը և միաժամանակ գահաժառանգը՝ Թինաթինը և երկրի քաջ սպարապետ Ավթանդիլն իրար սիրում են, բայց գաղտնի են պահում այդ սերը: Ոչ մի հանգամանք չի խանգարում, որ նրանք բացեն իրենց սերը և բախտավորվեն: Անսպասելիորեն երևան է գալիս վազրի մորթով քողարկված մի խորհրդավոր հերոս (վազրենավորը), որի առատ արցունքն ու անյուր վիշտն էլ դառնում են Ավթանդիլի ու Թինաթինի սերը բացելու բանալին, իսկ վազրենավորի կորցրած Դարեջանին գտնելը Ավթասլիլի ու Թինաթինի սերը պսակելու պայմանը՝

Ալթանդիլն իր սեփական ներքին մղումով և Թինաթինի պատվերով իրենց բախտը կապում է Տարիելի սիրահարին գտնելու փորձությունների հետ և վտանգավոր ու անորոշ ուղիների ցուպը ձեռքն առած որոնում է կորած ու գերված Դարեջանին։

Անթիլ ու անհամար փորձությունների, ասպետական ամենավեհ սխրագործությունների այդ դառնություններին Ռուսթավելին միաժամանակ մասնակից է անում նաև մի երրորդ անձնավորության՝ Փրիդոնին, որը նվիրվում է Տարիելին բնկերական խորագույն կապերով և անվերապահ հավատարմությամբ։

Ալթանդիլին ու Տարիելին վերջապես հաջողվում է Փրիդոնի օգնությամբ աղատել Դարեջանին Քաջեթի ամրոցից, և Տարիելի ու Դարեջանի բախտավորությունն Ալթանդիլի ու Թինաթինի երջանկության դուռն է բացում։

Այսպիսով երեք տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների՝ Ալթանդիլի, Տարիելի ու Փրիդոնի նվիրված, անկաշառ և հավատարիմ դաշինքը նվաճում է գերված արևը, կյանք տալիս նրան և աշխարհը ջերմացնում նրա պայծառ ու անիշ շողերով։

Պոեմի վերջին գլուխները փայլուն, կենսախինդ, առողջ ու ներդաշնակ կյանքի հաղթանակի մի կատարյալ ապոթեոզ են հանդիսանում, շողափթիթ և հարածուփ կյանքի մի ջերմ բաբախ, որպիսի կատարելության Ռուսթավելին իր հերոսներին հասցնում է հակառակ ճակատագրի, նախախնամության, եկեղեցական նախապաշարմունքների, նեղ, սխուրաստիկ այն աշխարհայացքի, որ իշխում էր միջնադարում։ Ռուսթավելին, այսպիսով, բարձր է կանգնած միջնադարից, նա խորտակում է միջնադարի բարոյագիտությունն ու գեղագիտությունը։

Ռուսթավելու «Վազրենավորից» հանվող եզրակացությունները կարելի է բնութագրել հետևյալ ձևով.

Սիրել ծփուն ու ծիածանաբանց, լիարյուն, այսկողմյան կյանքը, որի քաղցրությունը ձեռք է բերվում պայքարով ու տքնությամբ.

Արհամարհել սին, «անդրգերեզմանային» կյանքը, մերժել ֆատալիզմն ու խավարամտությունը.

Ապրել ու պայքարել մարդկայնորեն, տոգորված բարձր հումանիզմով, մարդասիրությամբ՝ սեփական երջանկությունը ուրիշների երջանկության վրա հենելով.

Հաստատակամորեն և անձնվիրաբար պայքարել կյանքի գեղեցկությունն ու մարդկանց երջանկությունը խախտող բոլոր ուժերի և արգելքների դեմ՝ հանուն լուսավոր ու արևաշող կյանքի, հանուն նրա լիարյուն բաբախի։

Այս եզրակացությունները, որ բխում են «Վազրենավորից», մաքուր և անշահախնդիր սիրո օրինակի հետ միասին կազմում են Ռուսթավելու պատգամը և ներդաշնակ են մեր օրերին, սնում են ապրելու, կյանքը սիրելու, թշնամիների դեմ անխնայորեն պայքարելու, հաղթանակից-հաղթանակ գնալու այն մեծ և նվիրական զգացմունքն ու կամքը, որով համակված են խորհրդային համաստեղության երկրների բոլոր ժողովուրդները։

Ի դեպ այդ գաղափարների, այդ կենսասիրության և հումանիզմի համար էր, որ «Վազրենավորն» ու Ռուսթավելին հալածվում էին հոգևորականության կողմից զարերի ընթացքում և դարձյալ ու դարձյալ դրա համար է, որ վրաց

ժողովուրդը սիրել է և իր սրտում անմահ է պահել յուր անմահ Շոթայի դործն ու հիշատակը:

Հավատեսության այս գլուխ-գործոցը Ռուսթավելին տվել է արտահայտչական շգերազանցված գրական միջոցներ, բանաստեղծական բարձր լեզվով, խոսքային-հնչական այնպիսի սիմֆոնիայով, որի կատարելությունը դժայիանք և միաժամանակ զարմանք է պատճառում յուրաքանչյուրին, ով ի վիճակի է «Վազրենավորը» բնագրով կարդալու: Տաղաչափության այն ձևը, որ մտքին վրաց գրականության մեջ Շոթան, այսպես կոչված շաիրին, դարձանալիորեն ներդաշնակում է բովանդակությանը, իսկ լեզվի պատկերավորությունը, հանգրի հարստությունը, թարմ ու անմար համեմատությունները, որոնք արտահայտչական և պատկերավորման ուժգնություն են հաղորդում «Վազրենավորի» հույզերին ու մտքներին, երկար դարեր ընդօրինակման աղբյուր են եղել վրաց հետագա գրողների համար:

Առանձնապես հարուստ է Ռուսթավելու լեզուն աֆորիզմներով, խորիմաստ, հակիրճ արտահայտություններով: Երոնք վաղուց թափանցել են վրաց ժողովրդի մեջ և դարգարել ու դարգարում են նրա ստեղծագործությունը և ողջ կենցաղը: Թե՛ գյուղում, թե՛ քաղաքում, ամենուրեք կհանդիպեք քահել ու ահել վրացիների, որոնք շափածո կամ արձակ պատմում են Տարիելի էպոպեան, հաճախ անգիր արտասանում «Վազրենավորից» գլուխներ և ամեն քայլափոխում մեջ բերում Ռուսթավելու մի հարմար ու դիպուկ աֆորիզմ:

Վրաց ժողովուրդը յուր հանձարի անունն ու ստեղծագործությունը դարեր շարունակ պահել է իր սրտում իբրև իր ամենանվիրական սրբությունը: Ոչ պակաս սիրով ու գորովով կպահպանեն այսուհետև այդ մեծահանձար բանաստեղծի, սիրո, լավատեսության և խոր հումանիզմի 800-ամյա մեծ երգչի անունն ու անմահ ստեղծագործությունը նաև այն բոլոր ժողովուրդները, որոնք ծանոթանում են պոեզիայի արեգնաշող այդ գազաթին:

Վրաստանի բոլորաշունչ դավակ, հանձարեղ բանաստեղծ Շոթա Ռուսթավելին ժողովրդական ֆանտազիայի և Արևելքի դիցաբանության մոտիվներից հյուսած իր հրաշալի կախարդական դիպակով գլուխից դորուքյամբ վաղուց է համակել նաև հայերին:

Ռուսթավելու ծննդյան 800-ամյակի տոնակատարության այս հոբելյանական օրերին մենք կարող ենք գոհունակությամբ նշել, որ վրացիների հետ բազմադարյան հարևանության մեջ ապրած և մանավանդ հնուց ի վեր վրաց հողում երկրորդ հայրենիք դտած հայերը իրենց նշանակալից լուսման ունեն ռուսթավելագիտության մեջ, Ռուսթավելու ստեղծագործությունը պահպանելու, բազմացնելու և տարածելու, այլև թարգմանելու և մեկնաբանելու ասպարեզում: Անցողակիորեն հիշատակելով, որ Ռուսթավելու գովերգած և իրեն ժամանակակից ավագ սերնդի երեք անվանի գրողներից մեկը՝ Սարգիս Թմոզվելին, իր ծագումով հայ էր՝ հարկ ենք համարում նշել, որ «Վազրենավորի» ձեռագիր օրինակներից մի մասը հայերի ձեռքով է գրվել, ըստ որում դրանք բարձր են գնահատվում ռուսթավելագիտության մեջ:

Ոչ պակաս առաջնակարգ տեղ են զբաղում հայերը նաև որպես «Վազրենավորի» թարգմանիչներ. եթե մի կողմ թողնենք բանասիրական գրականության մեջ ռուսերեն կամ օտարալեզու հատվածական թարգմանություն-

ները XIX դարի առաջին կեսում, ապա հայերեն առաջին թարգմանությունը, որ կատարված է բժշկապետ Ս. Բաստամյանի ձեռքով 1860—62 թթ. և հրատարակված «Կոունկ» ամսագրում, «Վազրենավորի» հնագույն թարգմանությունների մեջ դրավում է առաջնակարգ տեղերից մեկը։ Հետագայում թրիփսա՞յ բարբառով կատարված այդ թարգմանությունից առանձին մասեր գրական լեզվի են վերածել մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը, որն այն ղեկավարել է իր կազմած «Լուսաբեր» դասագրքի մեջ, և գրականագետ Մելոյանը՝ Սուրխաթյանի կազմած «Գրական գոհարներ» դասագրքի համար։

Ռուսթավելագիտության մեջ մեծ վաստակ ունեն նաև վաստակավոր դիտնական, Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Լ. Մելիքսեթ-Քեկր՝ իր բաղմաթիվ ուսումնասիրություններով, և Երևանի պետհամալսարանի վրաց լեզվի ու Մերձավոր արևելքի գրականության բաղմավաստակ դասախոս Կեռոզ Ասատուրը՝ իր մի շարք հոդվածներով, իր մշակած «Ռուսթավելու սերը» լեզենդով և «Վազրենավորի» լրիվ թարգմանությամբ, որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 1937 թ. իսկ երկրորդ հրատարակությունը Հայ-ձական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը այսօր դնում է հայ ընթերցողների սեղանի վրա։ Չի կարելի մոռանալ նաև Միրիմանյանին, որը ժամանակին հայ ընթերցողի համար կատարեց «Վազրենավորի» արձակ թարգմանությունը և հրատարակեց իր ներածական հոդվածով։

Առանձին ուշադրության արժանի է XX դարի բեղուն հայ թարգմանիչ Շարտին, Թրիփսիի նախկին գիմնազիականներից մեկի ուսուցիչ, որը հայերենից ռուսերեն կատարած իր բաղմաթիվ բանաստեղծական թարգմանություններից բացի, սկսած 1916 թ. նվիրվել է «Վազրենավորի» ռուսերեն թարգմանության գործին և 1927 թ. պրոֆ. Աբուլաձեի ներածական հոդվածով հանդերձ հրատարակել է դյուցազնավեպի չափածո լրիվ թարգմանությունը, որը պոեմի ռուսերեն թարգմանությունների մեջ երկրորդն է ըստ ժամանակի, Բալմոնտի թարգմանությունից հետո, բայց առաջինն է, որ կատարված է վրացերեն բնագրից և մնացել է հարազատ բնագրի տաղաչափությանն ու ոգուն։

Ի վերջո, որպես «Վազրենավորի» գնահատման ճիշտ ըմբռնման և կատարյալ թարգմանության նմուշ պետք է հիշատակենք մեր տաղանդավոր բանաստեղծ Վահան Տերյանի մասնակի թարգմանությունը դյուցազնավեպի հայտնի նախերգանքից, որն իր ճշտությամբ, հարազատությամբ, տաղաչափության և խոսքի մշակույթի արվեստով համարյա հավասարվում է բնագրին և մինչև այժմ մնում որպես դասական օրինակ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ռուսթավելու ստեղծագործության պահպանման, տարածման, ուսումնասիրության և թարգմանության գործում հայերն ունեն իրենց արժեքավոր ներդրումը. մեր ժողովրդի համակրանքն ու սերը Ռուսթավելու և նրա ստեղծագործության նկատմամբ վերջին տասնամյակներում՝ «Վազրենավորի» 750-ամյակի տոնակատարությունից հետո (1937 թ.), ստացան նոր և ավելի խոր հիմքեր։ Պետք է հուսալ, որ հանձարեղ բանաստեղծի ծննդյան 800-ամյակի հետ կապված միջոցառումները, առանձնապես Երևանի պետական համալսարանում Շոթա Ռուսթավելու անվան հայ-վրացական բանասիրության կաբինետի բացումը մի նոր աստիճանի կբարձրացնեն ռուսթավելագիտությունը և ռուսթավելասիրությունը հայ ժողովրդի մեջ՝ հորհրդային Հայաստանում։

Մենք սրտի անհուն բերկրանքով հաղորդակից ենք լինում մեր բաղմա-
դարյան հարևան ու բարեկամ վրաց ժողովրդի ազգային այս մեծ տոնի պատ-
ճառած ուրախությանը, գլուխ խոնարհում նրա մեծ զավակ բանաստեղծ Շոթա
Ռուսթավելու հանձարի առաջ և ընդգծում, որ դա նաև մեր տոնն է, խորհրդա-
լին բոլոր եղբայրական ժողովուրդների տոնը, ամբողջ աշխարհի առաջավոր
մարդկության մեծագույն տոներից մեկը: